

ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՊՐՈՇՈՒՄԸ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻՆ ՎՏԱՐԵԼԻՍ
ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ ՍԽԱԼՆԵՐԻ,
ՀԱՄԿ(Բ)Կ-ԻՑ ՎՏԱՐՎԱԾՆԵՐԻ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԶԵՎԱԿԱՆ-ԲՅՈՒՐՈԿՐԱՏԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՅԵՎ ԱՅԴ
ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

329.15 (47)

Պրակտիկական լեզուների, միացե՛ք

3K12

ՀԱՄԿ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻՆ ՎՏԱՐԵԼԻՍ
ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ ՍԽԱԼ-
ՆԵՐԻ, ՀԱՄԿ (Բ) Կ-ԻՑ ՎՏԱՐՎԱԾՆԵՐԻ ԲՈՂՈՔՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՁԵՎԱԿԱՆ-ԲՅՈՒՐՈԿՐԱՏԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐ-
ՄՈՒՆԲԻ ՅԵՎ ԱՅԴ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵ-
ԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Մոս ուրեւ սեղի ունեցավ ՀամԿ(բ)Կ Կենտրոնական
Կոմիտեի հերթական Պլենումը:

Պլենումը ֆննարկեց ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նսա-
ւոյանի հարցերը յեվ համապատասխան վորոշումներ ըն-
դունեց:

Պլենումը ֆննարկեց «Կուսակցությունից կոմունիս-
ներին վսարելիս կուսկազմակերպությունների կասարած
սխալների, ՀամԿ(բ)Կ-ից վսարվածների բողոքների նկաս-
մամբ ձեվական-բյուրոկրատական վերաբերմունքի յեվ այդ
բերությունները վերացնելու միջոցների մասին» հարցը
յեվ ստրեվ հրապարակվող համապատասխան վորոշումն
ընդունեց:

Բացի դրանից, Կենսկոմի Պլենումը ֆննեց մի շարք
սնեհական հարցեր յեվ ընդունեց համապատասխան վո-
րոշումներ:

Պլենումն ընկ. Պ. Պ. Պոսիւբելին ազատեց ՀամԿ(բ)Կ
Կենսկոմի Քաղբյուրոյի անդամության թեկնածուների
կազմից:

Պլենումը ՀամԿ(բ)Կ Կենսկոմի Քաղբյուրոյի անդա-
մության թեկնածուների կազմի մեջ մեցրեց ՀամԿ(բ)Կ
Մոսկվայի Մարզկոմի ֆարսուղար ընկ. Ն. Ս. Խրուչչելին յեվ
ՀամԿ(բ)Կ Կենսկոմի կազմբյուրոյի կազմի մեջ -- ընկ.
Լ. Զ. Մելիսին:



11-287589r

ПОСТАНОВЛЕНИЕ ПЛЕНУМА ЦК ВКП(б)
ОБ ОШИБКАХ ПАРТОРГАНИЗАЦИИ ПРИ ИСКЛЮЧЕНИИ
КОММУНИСТОВ ИЗ ПАРТИИ, О ФОРМАЛЬНО-БЮРОКРАТИЧЕСКОМ
ОТНОШЕНИИ К АПЕЛЛЯЦИЯМ ИСКЛЮЧЕННЫХ ИЗ ВКП(б)
И О МЕРАХ ПО УСТРАНЕНИЮ ЭТИХ НЕДОСТАТКОВ

АРМПАРТИЗДАТ, ЕРЕВАН, 1938

ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻՆ ՎՏԱՐԵԼԻՍ ԿՈՒՍԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՍՏԱՐԱՆՍ ՍԽԱՆՆԵՐԻ, ՀԱՄԿ(Բ)Կ-ԻՑ ՎՏԱՐՎԱԾՆԵՐԻ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԶԵՎԱԿԱՆ-ԲՅՈՒՐՈՎՐԱՍԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԻՔԻ ՅԵՎ ԱՅԴ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՅՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի Պլենումն անհրաժեշտ է համարում կուսակցական կազմակերպությունների և նրանց ղեկավարների ուչադրությունը դարձնել այն բանի վրա, վոր նրանք, մեծ աշխատանք կատարելով իրենց շարքերը Փաշիզմի տրոցկիստական—աջ դործակալներից մաքրելու գործում, այդ աշխատանքի պրոցեսում թույլ են տալիս լուրջ սխալներ և խեղաթյուրումներ, վորոնք խանգարում են կուսակցությունը յերկերեսանիներից, լրտեսներից, վնասարարներից մաքրելու գործին: Չնայելով ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի հաճախակի ցուցումներին և նախազգուշացումներին, կուսակցական կազմակերպությունները շատ զեպքերում բոլորովին սխալ և հանցավոր—թեթևամիտ կերպով են մոտենում կուսակցությունից կոմունիստներին վտարելու գործին:

ՀամԿ(Բ)Կ Կենտկոմը կուսակցական կազմակերպություններից և նրանց ղեկավարներից քանիցս պահանջել է ուչադիր, անհատական մոտեցում ունենալ դեպի կուսակցության անդամները՝ կուսակցությունից վտարելու կամ ՀամԿ(Բ)Կ-ից սխալ վտարվածներին կուսակցության անդամների իրավունքներում վերականգնելու հարցերը վճռելիս:

ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի Պլենումն ընկեր Ստալինի «Կուսակցական աշխատանքի թերությունների և տրոցկիստական ու այլ յերկերեսանիներին լիկվիդացիայի յենթարկելու միջոցների մասին» ղեկուցման առթիվ 1937 թ. մարտի 5-ի իր վորոշման մեջ մատնանում էր.

«Մեր միջանի կուսակցական ղեկավարները տառապում են նրանով, վոր նրանց մոտ բացակայում է պատշաճ ուչադրությունը դեպի մարդիկ, դեպի կուսակցության անդամները, դեպի աշխատողները: Ավելին—նրանք չեն ուսումնասիրում աշխատողներին, չգիտեն, թե նրանք ինչով են ապրում և ինչպես են աճում, առհասարակ չգիտեն իրենց կադրերը: Այդ իսկ պատճառով նրանց մոտ չկա ան-

հաստիքի մոտեցում դեպի կուսակցություն անդամները, դեպի կուսակցություն աշխատողները: Իսկ անհատական մոտեցումը հանդիսանում է գլխավոր գործը մեր կազմակերպչական աշխատանքում: Յեւլ հենց այն պատճառով, վոր կուսակցություն անդամներին և կուսակցական աշխատողներին զննատեսիս նրանց մոտ չկա անհատական մոտեցում, նրանք սովորաբար գործում են առանց կշռադատելու. նրանք կամ անհիմն կերպով, չափից դուրս գտնում են նրանց, կամ նույնպես անհիմն կերպով, չափից դուրս վատարանում, հազարներով և տասնյակ հազարներով վտարում են կուսակցությունից: Մեր միջանկի կուսակցական ղեկավարներն առհասարակ աշխատում են մտածել տասնյակ հազարների մասին, հոգ չտանելով «միավորներին» մասին, կուսակցություն առանձին անդամների մասին, նրանց բախտի մասին: Նրանք դատարկ բան են համարում կուսակցությունից հազարավոր և տասնյակ հազարավոր մարդկանց վտարելը, միևիթարելով իրենց նրանով, վոր մեր կուսակցությունը մեծ է և տասնյակ հազարավոր վտարվածները չեն կարող վորևէ բան փոխել կուսակցության դրուժյան մեջ: Սակայն կուսակցության անդամներին այդպես կարող են մոտենալ միայն այն մարդիկ, վորոնք ըստ գործի ելուժյան խորապես հակակուսակցական են:

Դեպի մարդիկ, դեպի կուսակցության անդամները և կուսակցական աշխատողներն այդպիսի անհոգի վերաբերմունքի հետևանքով կուսակցության մի մասում արհեստականորեն ստեղծվում է դժգոհություն և դադաղում:

Հասկանալի չէ, վոր տրոցկիստական յերկերեսանինները ճարպկորեն բռնում են այդպիսի չարացած ընկերներին և նրանց իրենց հետևից վարպետորեն քարշ են տալիս դեպի տրոցկիստական վնասարարություն ճահիճը»:

Համկ(բ)ի Կենտկոմի Պլենումի այդ նույն վորոշման մեջ ասված է.

«Դատապարտել կուսակցության առանձին անդամների բախտի, կուսակցության անդամներին կուսակցությունից վտարելու կամ վտարվածներին կուսակցության անդամներին իրավունքներում վերականգնելու հարցի նկատմամբ:

ձևական և անհոգի-բյուրոկրատական վերաբերմունքի պրակտիկան:

Պարտավորեցնել կուսակցական կազմակերպություններին ցուցաբերել առավելագույն զգուշություն և ընկերական հոգատարություն կուսակցությունից վտարելու կամ վտարվածներին կուսակցության անդամների իրավունքներում վերականգնելու հարցը վճռելիս»:

«Կուսակցական փաստաթղթերի ստուգման և փոխանակման ժամանակ կուսակցությունից վտարվածների բողոքներին քննարկման գործում յեղած սխալների մասին» 1936 թ. հունիսի 24-ի նամակում Համկ(բ)ի Կենտկոմը մատնանշում էր կուսակցական որդանների վոչ լուրջ, իսկ մի շարք դեպքերում անհոգի-չինովնիկական վերաբերմունքը կուսակցությունից վտարվածների բողոքների քննարկման նկատմամբ:

«Հակառակ Կենտկոմի ցուցումներին, —ասված է այդ նամակում, —վտարվածների բողոքները չափազանց դանդաղ են քննարկվում: Շատ վտարվածներ ամիսներով աշխատում են քննարկել տալ իրենց տված բողոքները: Մեծ քանակությամբ բողոքներ քննվել են հեռակա կարգով, առանց վորևէ կերպ ստուգելու բողոքողների դիմումները, առանց բողոքողների համար ապահովելու կուսակցությունից նրանց վտարման պատճառների առթիվ մանրամասն բացատրություններ տալու հնարավորությունը:

Մի շարք շրջանային կուսակցական կազմակերպություններում կուսակցությունից վտարվածների նկատմամբ թույլ է տրվել բոլորովին անհանդուրժելի կամայականություն: Սոցիալական ծագումը թաղցնելու և պասիվության համար, և վոչ թե կուսակցության և խորհրդային իշխանության դեմ նրանց թշնամական գործունեություն համար կուսակցությունից վտարվածներին ավտոմատ կերպով հանում էյին աշխատանքից, զրկում բնակարաններից և այլն:

Սյուպիսով այդ կուսակազմակերպությունների կուսակցական ղեկավարները, ինչպես հարկն է չյուրացնելով կուսակցության ցուցումները բոլշևիկյան զգաստության մասին, կուսակցական փաստաթղթերի ստուգման ժամանակ վտարվածների բողոքներին քննարկման նկատմամբ ցուցաբերած իրենց ձևական-բյուրոկրատական վերաբերմունքով ոգնել են կուսակցության թշնամիներին»:

Ինչպես յերևում է, տեղական կուսակցական կազմակերպություններին նախազգուշացնող ցուցումներ յնդել են:

Յեւլ աշնուամենայնիւ, չնայելով դրան, շատ կուսակազմակերպություններ և նրանց ղեկավարները շարունակում են ձեռնարկել և անհոգի-բոլորովրատաբար վերաբերվել դեպի կուսակցութեան առանձին անդամների բախտը:

Հայտնի յեն շատ փաստեր, յերբ կուսակցական կազմակերպություններն առանց վորեւ ստուգման և, հետեաբար, անհիմն կերպով կոմունիստներին վտարում են կուսակցությունից, նրանց զրկում աշխատանքից, հաճախ նույնիսկ առանց վորեւ հիմքի հայտարարում են ժողովրդի թշնամիներ, կուսակցութեան անդամների նկատմամբ ապօրինութիւն և կամայականութիւն են գործադրում:

Այսպես, որինակ, Ադրբեջանի Կ(Բ)Կ Կենտկոմը 1937 թ. նոյեմբերի 5-ի մեկ նիստում մեխանիկորեն հաստատեց 279 հոգու կուսակցութիւնից վտարելը. Ստալինգրադի մարզկոմը նոյեմբերի 26-ին հաստատեց 69 հոգու վտարումը. Նովոսիբիրսկի մարզկոմը նոյեմբերի 28-ին մեխանիկորեն հաստատեց ՀամԿ(Բ)Կ շրջկոմների վորոշումները 72 հոգու կուսակցութիւնից վտարելու մասին. ՀամԿ(Բ)Կ Կենտկոմին կից՝ Կուսակցական Վերահսկողութեան Հանձնաժողովի Կուսկոլեգիան Որջնիկիձեյի յերկրային կուսակցական կազմակերպութիւնում 160 բողոքարկածներից վերացրեց 101 կոմունիստի կուսակցութիւնից վտարելու վերաբերյալ վորոշումները, վորպես սխալ և բոլորովին անհիմն վորոշումներ. Նովոսիբիրսկի կուսակցական կազմակերպութիւնում նույն կերպ հարկավոր յեղալ վերացնել 80 վորոշումից 51-ը. Ռաստովի կուսկազմակերպութիւնում վերացված են 66 վորոշումներից 43-ը. Ստալինգրադի կուսկազմակերպութիւնում — 103-ից 58-ը, Սարատովի կուսկազմակերպութիւնում — 134-ից 80-ը. Կուրսկի կուսկազմակերպութիւնում — 92-ից 56-ը, Վիճնիցայի կուսկազմակերպութիւնում — 337-ից 164-ը և այլն:

Խարկովի մարզի շատ շրջաններում «ղզաստութեան» պատրվակի տակ կան աշխատանքից ապօրինի կերպով արձակելու և կուսակցութիւնից վտարվածներին ու անկուսակցական աշխատողներին աշխատանք տալուց հրաժարվելու բազմաթիւ փաստեր: Զմիշեվսկի շրջանում 1937 թ. հոկտեմբերին և նոյեմբերին առանց պատճառի աշխատանքից հանված են 36 ուսուցիչներ և նշված է հեռացնել ևս 42-ին: Դրա հետեանքով Տարանովկա, Զամոտայաժնոյե, Սկրիպայեվկա և այլ գյուղերի դպրոցներում պատ-

մութիւն, ԽՍՀՄ Սահմանադրութիւն, ռուսերեն, ուկրաիներեն և ուսար լեզուներ չեն դասավանդում:

Զմիշեվ քաղաքում միջնակարգ դպրոցում կենսաբանութիւն եր դասավանդում ուսուցչուհի Ժուրկին, 1904 թվի ծնված, կուսակցականի դուստր, Տամյա մանկավարժական ստաժ ունեցող, մանկավարժական ինստիտուտի չորրորդ կուրսի հեռակայով: Տեղական թերթում տպվեց մի թղթակցութիւն Իդյում քաղաքում վորպես ուսուցիչ աշխատող նրա յեղոր մասին՝ իբրեւ նացիոնալիստի: Այդ բովական յեղալ Ժուրկոյին աշխատանքից հեռացնելու համար: Ընկ. Ժուրկոյի հեռացման կապակցութեամբ արտահայտվեց քաղաքական անվստահութիւն նրա ամուսնուն և հարց բարձրացվեց նաև նրան հեռացնելու մասին: Մինչդեռ ստուգման ժամանակ պարզվեց, վոր Ժուրկոյի յեղոր վերաբերյալ թղթակցութիւնը զրպարտութիւն է և նա չհանվեց աշխատանքից:

Խարկով քաղաքում մի ձերբակալած տրոցկիստի — Գորսկայայի գործի վերաբերյալ ՆԳԺԿ որդաններն իբր վկա հարցաքննեցին Տինյակովի անվան Փարբիկայի գործարկումի կին աշխատող Եյնգորնին: Իրեն ՆԳԺԿ կանչելու մասին նա խոսեց հատուկ բաժնի պետ Սեմյոնկովի հետ, վորը դրանից հետո գործարանի կուսկոմում անհապաղ հարց դրեց, թե Եյնգորնը կապեր ունի տրոցկիստ Գորսկայայի հետ: Հետեանքն այն յեղալ, վոր Եյնգորնը հանվեց գործարկումում աշխատելուց և հեռացվեց: Եյնգորնի քրոջ ամուսնը, վոր աշխատում էր տեղական թերթի խմբագրատանը, հեռացված է այն պատճառով, վոր «չի հաղորդել տրոցկիստների հետ իր կնոջ քրոջ ունեցած կապի մասին»:

ՀամԿ(Բ)Կ Կուրսկի մարզկոմն առանց վորեւ ստուգման, հեռակայութեամբ կուսակցութիւնից հեռացրել և ձերբակալել է տվել կուսակցութեան անդամ, Դիմիտր-Տարանովսկի շաքարագործարանի գործարկումի նախագահ Իվանչենկովային, նրան վերադրելով այն բանը, վոր իբր թե նա գիտակցաբար և հակահեղափոխականորեն նախապատրաստել է անկուսակցական բանվոր Կուլինիչենկոյի յեղութը ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախընտրական ժողովում: Ստուգման ժամանակ հաստատված է, վոր Իվանչենկովայի ամբողջ «մեղքն» այն է յեղել, վոր նախընտրական ժողովում անկուսակցական բանվոր Կուլինիչենկոն իր կյանքի մասին պատմելուց հետո շփոթվել է իր յեղութում և մոռացել է ասել Գերագույն Խորհրդի պատգամավորութեան թեկնածուի ազգանունը:

Կուլբիշեվի մարզի շատ շրջաններում կուսակցութիւնից վտարվել են մեծ քանակութեամբ կոմունիստներ այն պատճառաբանութեամբ, թե նրանք ժողովրդի թշնամիներ են: Մինչդեռ ՆԳժԿ որդանները վոչ մի հիմք չեն գտնում կուսակցութիւնից այդ վտարվածներին ձերբակալելու համար: Որինակ՝ ՀամԿ(բ)Կ Բոլշե-Չերնիգովսկի շրջկոմը կուսակցութիւնից վտարել և ժողովրդի թշնամիներ և հայտարարել շրջանային կուսկազմակերպութեան մեջ յեղած 210 կոմունիստների ընդհանուր քանակից 50 հոգու, մինչդեռ ՆԳժԿ որդանները վոչ մի հիմք չեն գտել այդ վտարվածներից 43 հոգու ձերբակալելու համար: Կուլբիշե-վի մարզի գծով ՀամԿ(բ)Կ Կենտկոմին կից Կուսակցական Վե-րահակողութեան Հանձնաժողովի կուսկոլեգիա յեն ներկայանում ՀամԿ(բ)Կ շրջկոմների կողմից իբր ժողովրդի թշնամիներ վտար-ված շատ մարդիկ, պահանջելով կամ ձերբակալել իրենց, կամ թե իրենց վերայից վերացնել խայտառակութեան դրոշմը:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմն ունի տվյալներ այն մասին, վոր այդ-պիսի փաստեր տեղի ունեն նաև մյուս կուսկազմակերպու-թիւններում:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Պլենումը գտնում է, վոր այդ բոլոր և դրանց նման փաստերը կուսկազմակերպութիւններում տա-րածված են ամենից առաջ այն պատճառով, վոր կոմունիստների մեջ գոյութիւն ունեն, դեռ չեն հայտարարվել ու մերկացվել առանձին կարգերիստ-կոմունիստներ, վորոնք աշխատում են կու-սակցութեանից յեղած վտարումների, կուսակցութեան անդամ-ների դեմ ռեպրեսիաներ գործադրելու միջոցով աչքի ընկնել և առաջ քաշվել, աշխատում են իրենց ապահովագրել զգաստու-թեան պակասութեան հնարավոր մեղադրանքներից, գործադրե-լով անհիմն ռեպրեսիաներ կուսակցութեան անդամների դեմ:

Այդպիսի կարգերիստ-կոմունիստը կարծում է, թե քանի վոր կուսակցութեան անդամի դեմ հայտարարութիւն է տրված, թե-կուզ և սխալ կամ նույնիսկ պրոփոկացիոն, նա, կուսակցութեան այդ անդամը, վտանգավոր է կազմակերպութեան համար և նրանից պետք է շուտ ազատվել իրեն վորպես զգաստ մարդ ապահովա-գրելու համար: Այս պատճառով նա ավելորդ է համարում որ-յեկտիվորեն քննարկել կոմունիստին ներկայացված մեղադրանք-ները և վաղորդ կանխորոշում է, վոր անհրաժեշտ է նրան հե-ռացնել կուսակցութիւնից:

Այդպիսի կարգերիստ-կոմունիստը ցանկանալով քծնութեան միջոցով բարձրանալ, առանց այլևայլութեան խուճապ է տարա-

ծում ժողովրդի թշնամիների վերաբերյալ և կուսժողովներում թեթևամտութեամբ աղաղակում է կուսակցութեան անդամներին կուսակցութիւնից վորևէ ձևական հիմքով կամ առանց վորևէ հիմքի վտարելու մասին: Իսկ կուսակցական կազմակերպութիւն-ները հաճախ են իրենց սանձը տալիս այդպիսի աղմկարար-կարգերիստներին:

Այդպիսի կարգերիստ-կոմունիստը անտարբեր է վերաբեր-վում դեպի կուսակցութեան անդամների բախտը և պատրաստ է հայտնապես անկանոն կերպով կուսակցութիւնից վտարել տա-նյակներով կոմունիստների, վորպեսզի ինքը զգաստ յերևա: Նա պատրաստ է սակավ կարևոր զանցառութիւնների համար կու-սակցութեան անդամներին վտարել կուսակցութիւնից այն հաշ-վով, վորպեսզի իրեն «արժանիքներ» վերագրի թշնամիներին մերկացնելու գործում, իսկ յեթե վերադաս կուսակցական որ-գանները վերականգնում են կուսակցութիւնից սխալ կերպով վտարվածներին, նա ամենևին չի չփոփում, ընդունում է այն մարդու պողան, վորը գոհ է նրանով, թե ինքը համենայն դեպս վերաապահովագրվեց «զգաստութեան» նկատմամբ:

Կուսակցական կազմակերպութիւնները և նրանց ղեկավար-ները փոխանակ այդպիսի «կոմունիստներից» պատուելու կեղծ զգաստութեան դիմակը և նրանց ջրի յերես հանելու, հաճախ իրենք են կուսակցութեան շարքերի մաքրութեան համար զգաստ մարտնչողների լուսապսակ ստեղծում նրանց համար:

Ժամանակ է մերկացնելու այդպիսի, քող քույլ տրվի ա-սել, կոմունիստներին և դատապարտել նրանց վորպես կարյե-րիստների, վորոնք աշխատում են բարձրանալ կուսակցութեան-նից կատարվող վտարումների միջոցով, աշխատում են կուսակ-ցութեան անդամների դեմ ռեպրեսիաներ գործադրելու միջոցով վերաապահովագրել իրենց:

Այնուհետև հայտնի յեն վոչ սակավ փաստեր, յերբ ժողո-վրդի դիմախալորված թշնամիները, միաստարար-յերկերեսա-նիները պրոփոկացիոն նպատակներով կազմակերպում են կուսակ-ցութեան անդամների դեմ զրպարտիչ հայտարարութիւններ տալը և «զգաստութիւնը ծավալելու» պատրվակի տակ ձգտում են ՀամԿ(բ)Կ շարքերից վտարել ազնիվ և նվիրված կոմունիստ-ներին, դրանով իսկ իրենցից հեռացնելով հարվածը և իրենց պահելով կուսակցութեան շարքերում:

ՀամԿ(բ)Կ Ռոստովի մարզկոմի Կուսակցական ղեկավար որ-գանների բաժնի նախկին վարիչ՝ ժողովրդի մերկացված թշնամի

Շացկին և նրա գործակիցները, ոգտվելով ՀամԿ(բ)Կ Ռոստովի մարզկոմի ղեկավարների քաղաքական կարճատեսությունից, կուսակցությունից վտարում էին ազնիվ կոմունիստներին, ալիս-հայտնի սխալ տույժերի էին յենթարկում աշխատողներին, ամեն կերպ չարացնում էին կոմունիստներին, միաժամանակ անելով այն ամենն, ինչ վոր հնարավոր է, վորպեսզի կուսակցության մեջ պահեն իրենց հակահեղափոխական կադրերին:

Նույն Ռոստովում ՀամԿ(բ)Կ Ռոստովի մարզկոմի ղապրոցական բաժնի նախկին վարիչ, ժողովրդի թշնամի Շեստովան հակահեղափոխական կազմակերպության առաջադրությունը Ռոստովի մանկավարժական ինստիտուտի կուսակազմակերպության մեջ անցկացրեց մոտ 30 ազնիվ կոմունիստների վտարումը կուսակցությունից:

Ուկրաինայի Կ(բ)Կ Կիևի մարզկոմի նախկին քարտուղար, ժողովրդի թշնամի Կուդրյավցեվը կուսակցական ժողովներում շարունակ դիմում էր յեւույթ ունեցող կոմունիստներին այսպիսի պրովոկացիոն հարցով. «Իսկ դուք գոնե վորեւ մեկի մասին հայտարարություն գրե՞լ եք»: Այդ պրովոկացիայի հետևանքով Կիևում տրվեցին քաղաքականապես վարկարեկիչ հայտարարություններ քաղաքային կուսակազմակերպության անդամների գրեթե կեսի վերաբերյալ, ընդվորում հայտարարությունների մեծ մասը դուրս յեկավ պարզապես սխալ ու նույնիսկ պրովոկացիոն:

ՀամԿ(բ)Կ Ստալինգրադ քաղաքի Բարիկադյան շրջկոմի այժմ մերկացված թշնամի ղեկավարությունը պրովոկացիոն կերպով կուսակցությունից վտարեց և ձերբակալել տվեց «Բարիկադներ» գործարանի խոշորագույն ցեխերից մեկի պետ, 1917 թվից կուսակցության անդամ, նախկին կարմիր պարտիզան Մոխնատկինին, «հակախորհրդային խոսակցությունների» համար: Ինչպես ստուգումից պարզվեց, այդ «հակախորհրդային խոսակցությունները» կայանում էին նրանում, վոր ընկ. Մոխնատկինն ընկերների հետ զրուցելիս դժգոհություն էր հայտնել, թե գյուղխորհուրդն անհոգի վերաբերմունք է ցույց տալիս սպիտակների դեմ մարտում ընկած, քաղաքացիական պատերազմի տարիներում պարտիզանական ջոկատի մի հրամանատարի յերեսանների նկատմամբ, վորպիսի ջոկատում Մոխնատկինը յեղել է հրամանատարի ոգնական: Ընկեր Մոխնատկինը կուսակցության անդամի իրավունքներում վերականգնվել է միայն ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Կու-

սակցական վերահսկողության Հանձնաժողովի միջամտությունից հետո:

Կուսակցության ապարատը խցկված՝ կուսակցության թըշնամիների պրովոկացիոն աշխատանքի այդպիսի փաստեր տեղի յեն ունեցել նաև Վորոնեժի, Կրասնոդարի, Չելյաբինսկի և այլ կուսակցական կազմակերպություններում:

Այդ բոլոր փաստերը ցույց են տալիս, վոր մեր կուսակցական շատ կազմակերպություններ և նրանց ղեկավարները մինչև այժմ չեն կարողացել տեսնել և մերկացնել վարպետարեն դիմակավորված քշնամուն, վորն աշխատում է գգաստույթյան վերաբերյալ միջերով քողարկել իր քշնամույթյունն ու մնալ կուսակցության շարքերում—այս նախ,—և յերկրորդ, վորը ձգտում է ռեպրեսիաների միջոցներ գործադրելու փանապառնով ջլատել մեր բուլշևիկյան կադրերը, անվստահութուն և ավելորդ կասկածություն սերմանել մեր շարքերում:

Այդպիսի քողարկված թշնամին՝ ամենակատաղի դավաճանը սովորաբար բոլորից ավելի բարձր է գուռում զգաստության մասին, շտապում է վորքան կարելի յե շատ «մերկացնել» և այդ բոլորն անում է մի նպատակով՝ թաքցնել կուսակցության առաջ կատարած իր սեփական հանցագործությունները և կուսակցական կազմակերպության ուշադրությունը հեռացնել ժողովրդի իսկական թշնամիներին մերկացնելուց:

Այդպիսի քողարկված թշնամին՝ զաղրելի յերկերեսանին ամեն կերպ ձգտում է կուսակազմակերպություններում ստեղծել ավելորդ կասկածանքի պայմաններ, վորով վորեւ մեկի կողմից դրպարտված կոմունիստի պաշտպանության համար հանդես յեկող կուսակցության յուրաքանչյուր անդամին անհապաղ մեղադրում են զգաստության բացակայության և ժողովրդի թըշնամիների հետ կապ ունենալու մեջ:

Այդպիսի քողարկված թշնամին՝ ստոր պրովոկատորն այն դեպքերում, յերբ կուսակազմակերպությունն սկսում է ստուգել կոմունիստի մասին տրված հայտարարությունը, ամեն կերպ պրովոկացիոն իրադրություն է ստեղծում այդ ստուգման համար, կոմունիստի շուրջը քաղաքական անվստահության մթնոլորտ է սերմանում, և հենց դրանով, փոխանակ որյեկտիվորեն քննելու գործը, նոր հայտարարությունների հեղեղ է կազմակերպում նրա դեմ:

Կուսակցական կազմակերպությունները և նրանց ղեկավարները, փոխանակ հայտնաբերելու և մերկացնելու այդպիսի քո-

դարկված թշնամու պրոպոկացիոն աշխատանքը, հաճախ սանձը տալիս են նրա ձեռքը, նրա համար պայմաններ են ստեղծում՝ անպատիվ կերպով զրպարտելու ազնիվ կոմունիստներին և իրենք ել բռնում են կուսակցությունից մասսայական անհիմն վտարումներ կատարելու, տույժեր նշանակելու ուղին և այլն: Ավելին,—նույնիսկ կուսակցական ապարատը խցկված և ազնիվ կոմունիստներին զրպարտող թշնամիներին մերկացնելուց հետո ել հաճախ մեր կուսակցական ղեկավարները միջոցներ չեն ձեռք առնում կոմունիստներին կուսակցությունից սխալ կերպով վտարելու նկատմամբ կուսակցական կազմակերպություններում յեղած վնասարարության հետևանքները լիկվիդացիայի յենթարկելու համար:

Ժամանակ է, վոր բոլոր կուսակցական կազմակերպությունները և նրանց ղեկավարները մերկացնեն և մինչև վերջը վեջնացնեն դիմակավորված քշնամուն, վորը խցկվել է մեր շարքերը և աշխատում է զգաստության վերաբերյալ կեղծ ճիշտություն թաղցնել իր թշնամությունը և իրեն պահել կուսակցության մեջ, վորպեսզի այնտեղ շարունակի իր նողկալի դավաճանական աշխատանքը:

Ինչո՞վ բացատրել, վոր մեր կուսակցական կազմակերպությունները մինչև այժմ չեն մերկացրել և չեն դատափետել վոչ միայն կարյերիստ-կոմունիստներին, վորոնք աշխատել են աչքի ընկնել և առաջ քաշվել՝ կուսակցությունից կատարված վտարումների հաշվին, այլև կուսակցության ներսում գտնվող քողարկված թշնամիներին, վորոնք աշխատում են զգաստության վերաբերյալ աղաղակներով թաղցնել իրենց թշնամությունը և մնալ կուսակցության մեջ, աշխատում են ռեպրեսիաների միջոցներ կիրառելու ճանապարհով ջլատել մեր բոլշևիկյան կադրերը և ավելորդ կասկածոտություն սերմանել մեր շարքերում:

Այդ բացատրվում է հանցավոր-քեթևամիտ վերաբերմունքով դեպի կուսակցության անդամների բախտը:

Բոլորին հայտնի չէ, վոր մեր կուսակցական շատ ղեկավարներ հանդիսացան քաղաքականորեն կարճատես գործամուկներ, ժողովրդի թշնամիներին և կարյերիստներին թույլ տվին չրջանցել իրենց և կուսակցության անդամների բախտին վերաբերող հարցերի լուծումը թեթևամտորեն կապալով տվին յերկրորդական աշխատողներին, հանցադործ կերպով մի կողմ քաշվելով այդ գործի ղեկավարությունից:

Մարդկոմները, յերկրկոմները, ազգային կոմկուսակցու-

թյունների կենտկոմներն ու նրանց ղեկավարները վոչ միայն չեն ուղղում կուսակցությունից կոմունիստներին վտարելու գործում յեղած հակակուսակցական, բոլշևիզմին խորթ պրակտիկան, այլև հաճախ իրենք իրենց սխալ ղեկավարությամբ ձեռնադրում և անհոգի-բյուրոկրատական վերաբերմունք են սերմանում դեպի կուսակցության անդամները և դրանով իսկ ստեղծում են բարենպաստ պայմաններ կարյերիստ-կոմունիստների և կուսակցության՝ դիմակավորված թշնամիների համար:

Ձի յեղել վոչ մի դեպք, վոր մարդկոմները, յերկրկոմները, ազգային կոմկուսակցությունների կենտկոմները, ըմբռնելով գործը, դատապարտեն դեպի կուսակցության անդամներն անհիմն, ընդհանուր մոտեցում ունենալու պրակտիկան, պատասխանատվության յենթարկեն տեղական կուսակցական կազմակերպություններին՝ կուսակցությունից կոմունիստներին անհիմն և սխալ կերպով վտարելու համար:

Կուսակցական կազմակերպությունների ղեկավարները պարզամտորեն գտնում են, վոր սխալ վտարվածների նկատմամբ յեղած սխալների ուղղումը կարող է գցել կուսակցության հեղինակությունը և վնասել ժողովրդի թշնամիների մերկացման գործին,—առանց հասկանալու, վոր կուսակցությունից սխալ վտարելու յուրաքանչյուր դեպք ձեռնտու չէ կուսակցության թշնամիներին:

Մարդային ու յերկրային շատ կազմակերպություններում առանց վորևե ընթացք ստանալու ընկած են մեծ քանակությամբ չքննված բողոքներ: Ռոստովի մարզում չի քննված ավելի քան 2.500 բողոք, Կրասնոդարի յերկրամասում—2.000, Սմոլենսկի մարզում—2.300, Վորոնեժի մարզում—1.200, Սարատովի մարզում—500 և այլն:

Մարդկոմները, յերկրկոմները, ազգային կոմկուսակցությունների կենտկոմները, հրաժարվելով վտարվածների բողոքները քննարկելուց, հակառակ կուսակցության կանոնադրության, այդ հարցի վերաբերյալ համի(ք)Կ չրջկոմների և քաղկոմների վորոշումները դարձրել են անվճարեկ և վերջնական վորոշումներ:

Այդ բոլորը նշանակում է, վոր մարդկոմները, յերկրկոմները, ազգային կոմկուսակցությունների կենտկոմները ըստ ելության մի կողմ են քաշվել ամենակարևոր և սուր հարցում—կուսակցության անդամների բախտի հարցում—տեղական կուսակցական կազմակերպությունների գործունեյությունը ղեկա-

վարելուց, այդ հարցի լուծումը մատնելով ինքնահոսի, իսկ հաճախ նաև կամայականության:

Մարզկոմները, յերկրկոմները, ազգային կոմկուսակցությունների կենտկոմներն իրենք են կուսակցությունից մասսայական, անհիմն վտարումների պրակտիկան խրախուսում նրանով, վոր անպատիժ են թողնում կուսակցական այն ղեկավարներին, վորոնք կոմունիստների վերաբերմամբ կամայականություն են թույլ տալիս:

Ժամանակ է վերջ տալու դեպի մարդիկ, դեպի կուսակցության անդամները բոլլեխիկներին խորթ ձեական և անհոգի-բյուրոկրատական վերաբերմունքին:

Ժամանակ է հասկանալու, վոր

«Կուսակցության անդամի համար կուսակցությունը դարձել է շատ մեծ և լուրջ գործ և կուսակցության անդամությունը կամ կուսակցությունից վտարվելը՝ այդ մեծ բեկում է մարդու կյանքում»:

Ժամանակ է հասկանալու, վոր

«Կուսակցության շարքային անդամների համար կուսակցության մեջ գտնվելը կամ կուսակցությունից վտարվելը, — այդ կյանքի և մահվան հարց է» (Ստալին):

Ժամանակ է հասկանալու, վոր բոլլեխիկյան զգաստության ելությունն այն է, վոր պետք է կարողանալ մերկացնել թշնամուն, վորքան էլ վերջինս լինի խորամանկ և ճկուն, ինչպիսիք դամիդ էլ հագած լինի նա, և վոչ թե այն, վոր առանց քննության կամ «համենայն դեպս» կուսակցությունից տասնյակներով և հարյուրներով վտարեն բոլոր նրանց, ովքեր պատահեն:

Ժամանակ է հասկանալու, վոր բոլլեխիկյան զգաստությունը վոչ միայն չի բացառում, այլ ընդհակառակը յենթադրում է առավելագույն զգուշություն և ընկերական հոգատարություն ցուցաբերելու կարողություն այն ժամանակ, յերբ վճռվում են կուսակցությունից վտարելու կամ վտարվածներին կուսակցության անդամների իրավունքներում վերականգնելու հարցերը:

Համկ(բ)Կ Կենտկոմի Պլենումը կուսակցական բոլոր կազմակերպություններից և նրանց ղեկավարներից պահանջում է ըստ ամենայնի բարձրացնել կուսակցական մասսաների բոլլեխիկյան զգաստությունը, մերկացնել և մինչև վերջ արմատախիչ անել կուսակցության բոլոր կամա թե ակամա թշնամիներին:

Համկ(բ)Կ Կենտկոմի Պլենումն այդ խնդիրը հաջողությամբ լուծելու կարևորագույն պայմանը համարում է դեպի մարդիկ, դեպի կուսակցության անդամներն անհիմն, վոչ անհատական, ընդհանուր մոտեցում ունենալու հակակուսակցական պրակտիկայի անմնացորդ լիկվիդացիան:

Համկ(բ)Կ Կենտկոմի Պլենումը վարչում է.

1. Պարտավորեցնել մարզկոմներին, յերկրկոմներին, ազգային կոմկուսակցությունների կենտկոմներին և բոլոր կուսակցական կազմակերպություններին՝ վճռականապես վերջ տալ կուսակցությունից մասսայական, անհիմն վտարումներին և իրականում սահմանել անհատական դիֆերենցիալ մոտեցում՝ կուսակցությունից վտարելու կամ վտարվածներին կուսակցության անդամների իրավունքներում վերականգնելու հարցերը վճռելիս:

2. Պարտավորեցնել մարզկոմներին, յերկրկոմներին, ազգային կոմկուսակցությունների կենտկոմներին՝ կուսակցական պոստերից հանել և կուսակցական պատասխանատվության յենթարկել կուսակցական այն ղեկավարներին, վորոնք չեն կատարում Համկ(բ)Կ Կենտկոմի դիրեկտիվները, Համկ(բ)Կ անդամներին և թեկնածուներին կուսակցությունից վտարում են առանց բոլոր նյութերը մանրակրկիտ կերպով ստուգելու և կուսակցության անդամների վերաբերմամբ կամայականություն են թույլ տալիս:

3. Առաջարկել մարզկոմներին, յերկրկոմներին, ազգային կոմկուսակցությունների կենտկոմներին և Համկ(բ)Կ Կենտկոմին կից Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի կուսկոլեգիաներին՝ յերեք ամսվա ընթացքում ավարտել կուսակցությունից բոլոր վտարվածների բողոքների քննությունը:

4. Պարտավորեցնել բոլոր կուսակցական կոմիտեներին՝ կուսակցությունից կոմունիստներին վտարելու իրենց վորոշումներում պարզ ու ճշգրիտ շարադրել այն պատճառարանությունները, վորոնք վտարելու հիմք են ծառայել, — վորպեսզի վերադաս կուսակցական որդանները հնարավորություն ունենան ստուգելու այդ վորոշումների ճշտությունը, իսկ ջրջկոմի, քաղկոմի, մարզկոմի կամ ազգային կոմկուսակցության Կենտկոմի յուրաքանչյուր այդպիսի վորոշում անպայման հրապարակել մամուլում:

5. Սահմանել, վոր կուսակցական որդանները, տեղական կուսկազմակերպությունների կողմից սխալ վտարվածներին վերականգնելով կուսակցության անդամների իրավունքներում, պարտավոր են իրենց վորոշումներում ճշտությամբ մատնանշել,

11-2875899

թե ՀամԿ(բ)Կ վո՞ր շրջկոմը, քաղկոմը պետք է կուսակցական փաստաթղթեր տա կուսակցութեան մեջ վերականգնւածին:

6. Պարտաւորեցնել կուսակցութեան շրջկոմներին, քաղկոմներին՝ անհապաղ տալ կուսակցութեան մեջ վերականգնւածներին կուսակցական փաստաթղթեր, նրանց մասնակից դարձնել կուսակցական աշխատանքին և բացատրել սկզբնական կուսկադմակերպությունները բոլոր անդամներին, վոր նրանք պատասխանատու յեն ՀամԿ(բ)Կ շարքերում վերականգնւածներին բոլշևիկյան դաստիարակութեան համար:

7. Պարտաւորեցնել կուսակցական կադմակերպություններին՝ կուսակցական պատասխանատւութեան յենթարկել այն անձանց, վորոնք մեղավոր են կուսակցութեան անդամներին զրկւալարելու մեջ, լիովին վերականգնել կուսակցութեան այդ անդամներին վարկը և մամուլում հրապարակել իրենց վորոշումներն այն դեպքերում, յերբ մամուլում նախապես գետնի վրէ ելին կուսակցութեան անդամին վարկաբեկող նյութեր:

8. Կուսկադմակերպություններին արգելել՝ մինչև բողոքներ քննությունը և վտարման վերաբերյալ վերջնական վորոշում ընդունելը կոմունիստի հաշվառման քարտում կուսակցությունից վտարվելու փաստի դրանցումը:

9. Արգելել այն սխալ, վնասակար պրակտիկան, յերբ ՀամԿ(բ)Կ-ից վտարվածներին անհապաղ հանում են իրենց գրաված պաշտոնից:

Սահմանել, վոր այն բոլոր դեպքերում, յերբ ՀամԿ(բ)Կ-ից վտարելու կապակցութեամբ անհրաժեշտ է լինում աշխատողին ազատել իր գրաված պաշտոնից, այդ ազատումը կարող է կատարվել նրան ուրիշ աշխատանք տրամադրելուց հետո միայն:

10. Պարտաւորեցնել մարզկոմներին, յերկրկոմներին, ազգային կոմկուսակցությունների կենտկոմներին՝ վոչ ուշ քան մինչև 1938 թվի փետրվարի 15-ը համապատասխան խորհրդային ու տնտեսական որդանների միջոցով ապահովել ՀամԿ(բ)Կ-ից վտարվածների աշխատանքի մտնելը և այսուհետև թույլ չտալ այնպիսի դրություն, վոր ՀամԿ(բ)Կ-ից վտարվածներն աշխատանքից զրկված մնան:

ԲՈԼՇԵՎԻԿՈՐԵՆ ԿԱՏԱՐԵԼ ՍՏԱԼԻՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Անցած տարին նշանակալից դարձավ մեր կուսակցութեան մեծ հաջողություններով՝ Փաշիգմի տրոցկիստական-բուխարինական լրտեսներից իր շարքերը մաքրելու գործում: Միլիոնավոր մարդկանց գիտակցութեան մեջ խորը թափանցեց ընկեր Ստալինի ճառը՝ կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեյի փետրվար-մարտյան Պլենումում: Ապուշային հիվանդությունը՝ անհողությունը լիկվիդացիայի յենթարկելու, զգաստությունը բարձրացնելու վերաբերյալ ընկեր Ստալինի կոչն իր ներգործությունն ունեցավ, կուսակցական մասսաները քաղաքականապես հասունացան, կոփվեցին մաքրման այն հսկայական աշխատանքում, վոր կուսակցությունը կատարել է մանավանդ վերջին տասն ամսում, կենտկոմի փետրվար-մարտյան Պլենումից հետո:

Տրոցկիստական-բուխարինական լրտեսներին ու զիվերսանտներին արմատախիլ անելու արդյունքները դժվար է վերադնահատել, այդ արդյունքները հավասար են կապիտալիստական աշխարհի դեմ սոցիալիզմի յերկրի կողմից մեծ ճակատամարտը շահելուն: Տրոցկիստական-բուխարինական պրովոկատորների և վնասարարների վորջերը ջախջախելու պրոցեսին ուղեկցում էր կուսակցական և պետական աշխատանքի բոլոր բնագավառներում տասնյակ հազարավոր մարդկանց լայն առաջնացումը, վորոնք մինչև վերջը նվիրված են Լենինի Ստալինի գործին, ժողովրդի գործին:

Վիթխարի յե կուսակցութեան այդ հաղթանակը: Այն ավելի մեծ կլիներ, յեթե չլինեին կուսակցական կադմակերպությունների սխալները՝ իրենց շարքերը Փաշիգմի գործակալներից մաքրելու ընթացքում, սխալներ, վորոնք մատնանշում է ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի հերթական Պլենումի այսոր հրապարակված վորոշումը: Այդ սխալների ելությունն ամենից առաջ այն է, վոր

«Հնայելով Համկ(բ)Կ Կենտկոմի հաճախակի ցուցումներին և նախազգուշացումներին, կուսակցական կազմակերպությունները շատ դեպքերում բոլորովին սխալ ու հանցավոր-թեթևամիտ կերպով են մոտենում կուսակցությունից կոմունիստներին վտարելու գործին»:

Ընկեր Ստալինը քանիցս նախազգուշացրել է դեպի այդ կարևորագույն հարցն ընդհանուր, վոչ դիֆերենցիալ, անհոգի — բյուրոկրատական վերաբերմունքի դեմ: Կոչ անելով բարձրացնել քաղաքական զգաստությունը, կուսակցությունը քանիցս ընդգծել է, Վոր ամեն մի կուսակազմակերպության իսկական բոլշևիկյան զգաստությունն ամենևին չի չափվում կուսակցությունից վտարվածներին քանակով, իսկ կուսակցությունից կոմունիստներին ընդհանուր, չմտածված, անհիմն կերպով վտարելը վոչ թե ոգուտ, այլ վնաս է բերում:

Այդ չեն հասկացել կուսակազմակերպությունների շատ դեկավարներ, չեն հասկացել, Վոր բոլշևիկյան զգաստությունը և դեպի կուսակցության անդամներն ուշադիր, մտածված վերաբերմունքը վոչ միայն չեն հակասում, այլ անսպաժան ուղեկցում են իրար: Իսկական բոլշևիկյան զգաստություն—այդ նշանակում է քննաժողով բարեկամից և բարեկամին քննաժողով տարբերելու կարողություն: Իսկ մի քանի կուսակազմակերպությունների (որինակ՝ Կոլբերկի) դեկավարներ, Վոր առաջ անհոգ կերպով ելին նայում ժողովրդի յերգվյալ թշնամիներին, Վորոնք գործում ելին նրանց չորջը,—նեմվեցին դեպի կուսակցության շարքերից տասնյակ և հարյուրավոր կոմունիստների անհիմն վտարումը: Կենտկոմի Պլենումի այսօր հրապարակվող վորոշման մեջ բերվում են այդպիսի ցատկոմների վառ օրինակներ: Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն վերստին կտրուկ կերպով դատապարտում է այդպիսի «զգաստությունը», Վորը կեղծ է, խարդախ է, իր եյուլթյամբ հակակուսակցական:

Կեղծ զգաստությունը ձեռնտու յե միայն Ֆաշիստներին և նրանց տրոցկիստական—բուխարինական գործակալներին, Վորովհետև դա իսկական թշնամիներին հասցվող հարվածը փոխադրում է կարծեցյալ թշնամիներին վրա: Իդուր չե, Վոր տրոցկիստական—բուխարինական լրտեսական բանդաների մնացորդներն ազնիվ կոմունիստներին զրպարտող «մերկացումները» դարձրել են կուսակցության դեմ ուղղված իրենց սիրած գեները: Այդ պրոֆիկատորական պրիոմի նպատակը պարզ է. Ֆաշիզմի գործակալությունը

գերզգաստության դիմակի տակ ձգտում է ջլատել, շարքից դուրս հանել մեր բոլշևիկյան կազմերին:

Ժողովրդի թշնամիները գերզգաստության դիմակի տակ ձգտում են ստեղծել այնպիսի պատկերացում, թե ամենուրեք շատ են թշնամիները, ձգտում են անլստահություն և ավելորդ կատաճոտություն սերմանել կուսակցական կազմակերպություններում: Այդ թակարդով են նրանք վորսում այն փոսած «դեկավարներին», Վորոնք չեն տեսնում, Վոր թշնամին դադարած է, սակայն վոչընչություն է նույնիսկ իր կատաղության մեջ, Վոր հոգր է ժողովրդը—դաևան ուժը, Վոր մեր յերկրում անսպառ, անհատնում են իսկական բոլշևիկյան ստալինյան կազմերի առաջնաժամ և աման աղբյուրները:

Կուսակցական բոլոր կազմակերպությունների և նրանց դեկավարների հիմնական խնդիրներից մեկը պետք է լինի Կենտրոնական Կոմիտեյի Պլենումի պահանջների իրականացումը:

«Մերկացնել և մինչև վերջը վոչնչացնել դիմակավորված քննաժողով, Վորը խցկվել է մեր շարքերը և աշխատում է զգաստության վերաբերյալ կեղծ աղաղակներով թաղցնել իր թշնամությունը և իրեն պահել կուսակցության մեջ, Վորպեսդի այնտեղ շարունակի իր նողկալի դավաճանական աշխատանքը»:

Մի քանի կուսակազմակերպությունների փոսած «դեկավարներ» մեծ ծառայություն են մատուցում թշնամուն, չմերկացնելով և չհետապնդելով զրպարտիչներին, դրանով իսկ խրախուսելով կարյերիստ-կոմունիստներին, Վորոնք աշխատում են աչքի ընկնել և առաջ քաշվել կուսակցությունից կատարված վտարումների հաշվին:

Կենտրոնական Կոմիտեյի Պլենումը դատապարտեց կարյերիստ-կոմունիստներին, Վորոնք անտարբեր են վերաբերվում դեպի կուսակցության անդամների բախտը և սրտաբառ են հայտնապես սխալ կերպով տասնյակներով կոմունիստներ վտարել կուսակցությունից, Վորպեսդի իրենք զգաստ յերևան:

Ազնիվ կոմունիստներին զրպարտելը, նրանց մասսայական վտարումը կուսակցությունից,—դա վնասարարություն ձև է կուսակցական կազմակերպություններում: Կենտրոնական Կոմիտեյի Պլենումը բոլոր կուսակազմակերպություններից պահանջում է տրոցկիստական—բուխարինական բանդայի վնասարարության նաև այս ձևի հետևանքների ամենաարագ լիկվիդացիան: Այդ նպատակներով Կենտկոմի Պլենումը Վորոնք:

«Առաջարկել մարդկոմներին, յերկրկոմներին, աղգային կոմ-

կուսակցութիւնները կենտրոններին և ՀամԿ(բ)Կ Կենտկոմին կից Կուսակցական Վերահսկողութեան Հանձնաժողովները կոլեկտիւներին՝ յերեք ամսվա ընթացքում ավարտել կուսակցութիւնից բուրժուազականութեան բաժնի քննութիւնը»։

Միջանի տասնյակ հազար աղաքիս բողոքներ են կուտակվել։ Այդ բողոքները հետևում կանոնադր են հաղարավոր կենդանի մարդիկ։ Յեւ ինքնակոմի Պլենումը նորից ու նորից հիշեցնում է, վոր ժամանակ է վերջ տալու բոլշևիկների համար խորթ, ձեռնարկ և անհոգի-բոլորովորական վերաբերմունքին դեպի մարդիկ, դեպի կուսակցութեան անդամները։ Ժամանակ է վերջ տալու վերահսկողութեան համար կուսակցութիւնից վտարումներ կատարելու հակակուսակցական պրակտիկային։ Ժամանակ է վերջ տալու այն վնասակար պրակտիկային, վորով ՀամԿ(բ)Կ-ից վտարվածներն ավտոմատ կերպով հանվում են իրենց գրաւած պաշտոնից և զրկվում աշխատանքից, — նույնիսկ մինչև շրջկոմում կամ մարզկոմում գործը քննելը։ Ժամանակ է վերջ տալու հակակուսակցական այն պրակտիկային, վորով տեղական կադմակերպութիւնները չեն ցանկանում կուստոմսը վերադարձնել կուսակցութեան շարքերում վերականգնվածներին և նրանց մասնակից դարձնել կուսակցական աշխատանքին։ Ժամանակ է վերջ տալու զրպարտիչներին անպատիժ թողնելուն և ջախջախել այն մարդկանց վարքի իսկական վերականգնման դեմ ցույց տրվող դիմադրութիւնը, վորոնք անտեղի արատաւորվել, զրպարտվել են ժողովրդի թշնամիների կամ կարգերիստ-կոմունիստների կողմից։

Տրոցկիստական-բուխարինական թափթիւղների դեմ պայքարը չի ավարտված։ Զգաստութեան վոչ մի թուլացում։ Ընդհակառակը,

«ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Պլենումը կուսակցական բոլոր կադմակերպութիւններից և նրանց գեկավարներից պահանջում է ըստ ամենայնի բարձրացնել կուսակցական մասսաների բոլշևիկյան զգաստութիւնը, մերկացնել և մինչև վերջն արմատախիլ անել կուսակցութեան բոլոր կամա թե ակամա թշնամիներին»։

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Պլենումն այդ խնդրի հաջող լուծման կարևորագույն պայմանը համարում է դեպի մարդիկ, դեպի կուսակցութեան անդամներն անհիմն, վոչ անհատական, ընդհանուր մոտեցման հակակուսակցական պրակտիկայի անմիջապէս լիկվիդացիան»։

Կենտրոնական Կոմիտեյի հերթական Պլենումի այսօր հրապարակվող վորոշումը ամենահսկայական նշանակութիւն ունի մեր

ամբողջ կուսակցութեան համար։ Այն յուրաքանչյուր բոլշևիկի սպառազինում է կուսակցական աշխատանքի պայմանների և խնդիրների ճշգրիտ, պարզ հասկացողութեամբ։ Այն սպառազինում է յուրաքանչյուր բոլշևիկի՝ վնասարարութեան և տրոցկիստական-բուխարինական լրտեսների պրոպագանդիստների դեմ պայքարելու համար։ Այն ցույց է տալիս կուսակադմակերպութիւնների թույլ տված սխալների ելութիւնը և լուսավորում է այն ուղին, վորով այդ սխալները կարող են և պետք է ուղղվեն ամենակարճ ժամանակամիջոցում։

Իսկ այդ ճանապարհը, վոր ցույց է տվել Ստալինյան Կենտրոնական Կոմիտեն, և առանց չեղվելու, հաստատապես դնալ սխալների ուղղման այդ ճանապարհով, — ահա յուրաքանչյուր կուսակցական կադմակերպութեան, յուրաքանչյուր կուսակցական գեկավարի սրբազան պարտականութիւնը։

(«ՊՐԱՎԴԱ»-յի 1938 թ. հունվարի 19-ի առաջնորդը)

Թարգմանեց Ա. Տ.-Մկրտչյան
Խմբագրեց Վ. Գուրգենյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Հ. Մանվելյան
Կոնտրոլ սրբագրիչ Ա. Տ.-Մկրտչյան

Գլավլիտի լիազոր № Կ-3257, հրատ. № 534

Պատվեր № 13, տիրաժ 50.000

Հանձնված է արտադրության 27/I 1938 թ.

Ստորագրված է տպագրելու 29/I 1938 թ.

Գինը 20 Կ.

Հայկուսհրատի տպարան, Յերևան, Ալավերդյան № 71

ՀՀ Ազգային գրադարան



NL0928192

4 ФЕВ. 1938

36

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.

11

28758

ПОСТАНОВЛЕНИЕ ПЛЕНУМА ЦК ВКП(б)

ОБ ОШИБКАХ ПАРТОРГАНИЗАЦИЙ ПРИ ИСКЛЮЧЕНИИ КОММУНИСТОВ ИЗ ПАРТИИ, О ФОРМАЛЬНО-БЮРОКРАТИЧЕСКОМ ОТНОШЕНИИ К АПЕЛЛЯЦИЯМ ИСКЛЮЧЕННЫХ ИЗ ВКП(б) И О МЕРАХ ПО УСТРАНЕНИЮ ЭТИХ НЕДОСТАТКОВ